ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի <<Չարենցավանի № 6 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի անգլերեն /շաբաթական 12 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի:Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար մասնակիցը տնօրենի կողմից նշանակված աշխատակցին է տրամադրում

1. *Դիմում(Ձև 1)՝ , մեկ լուսանկար՝ 3×4 չափի,*
2. *Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ(դիպլոմ),*
3. *Անձը հաստատող փոստաթուղթ*
4. *<<Հանրակրթության մասին>> ՀՀ Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան ՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),*
5. *Ինքնակենսագրություն (Ձև 5)*
6. *Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,*
7. *ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:*
8. *Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում),*
9. *Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:*

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում 2022թ. դեկտեմբերի 19-ից մինչև 30-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10 ^{00}-ից 15 ^{00}-ը, բացի կիրակի և տոնական օրերից:
Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:
Մրցույթը տեղի կունենա 2023թ հունվարի 9-ին՝ ժամը 14 ^{30}-ին, ՀՀ Կոտայքի մարզի <<Չարենցավանի № 6 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ում՝ քաղաք Չարենցավան Ռուսովի 7 հասցեում:
Տեղեկությունների համար զանգահարել (0226) 4-54 -98 հեռախոսահամարով: